ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՆ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ:

Առարկա՝ Պատմություն
Ուսուցչուհի՝ Լիանա Մաթևոսյան
Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

Գյումրի-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1.1.Հարավսլավիան երկրորդ աշխարհամարտից հետո 4

1.2. Հարավսլավիայի տնտեսական խնդիրները 13

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ՓԼՈՒԶՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

2.1. Տասնօրյա պատերազմը և Սլովենիայի անկախացումը 17

2.2. Խորվաթական պատերազմը 18

2.3 Պատերազմը Բոսնիայում 19

2.4. Կոսովոյի պատերազմը 21

2.5.Հարավսլավիայի փլուզումն ու նրա հետևանքները 23

ՎԵՐՋԱԲԱՆ 27

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ Համաշխարհային պատերազմը սկսվել է 1939 թվականի սեպտեմբերի 1-ին Գերմանիայի Լեհաստան ներխուժումով:

Երկրորդ Համաշխարհային պատերազմը հրահրված էր միջազգային իմպերիալիստական ռեակցիայի և հիմնականում ագրեսիվ պետությունների ֆաշիստական Գերմանիայի, ֆաշիստական Իտալիայի և ռազմատենչ ճապոնիայի կողմից և դարձավ ամենամեծ պատերազմներից մեկը:

Պատերազմական գործողությունների մեջ ներառված էր 61 պետություն, աշխարհի բնակչության գրեթե 80%-ը, ռազմական գործողությունները իրականացվում էին 40 երկրների տարածքում, ինչպես նաև ծովային և օվկիանոսային տարածքներում:

Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ առճակատումը սկզբնական շրջանում իրականանում էր ոչ այնքան ռազմական, որքան դիվանագիտական և ռազմավարական մակարդակներում, համենայն դեպս, մինչև արևմտյան ճակատում ռազմական գործողությունների սկիզբը: Ամբողջ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում Բալկանները հետաքրքրություն էին ներկայացնում Մեծ Բրիտանիայի համար ռազմավարական և քաղաքական պատճառներով:

Տվյալ տարածաշրջանը գրավում էր բազմաթիվ պետությունների ուշադրությունը, որոնք պայքարում էին Միջերկրական և Սև ծովերում վերահսկողության հաստատման համար:

Ըստ էության, Բալկանները՝ մի կապ են, որով զուգամիտվում էին բոլոր եվրոպական պետությունների հետաքրքրությունները և այդ իսկ պատճառով բալկանյան ազգությունների ճակատագիրը խորհրդանշում է բոլոր եվրոպական ազգությունների ճակատագիրը:

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1.1.Հարավսլավիան երկրորդ աշխարհամարտից հետո

Երկրորդ Համաշխարհային պատերազմը Հարավսլավիայի համար ավարտվեց միայն 1945թ. մայիսի 15-ին, Հարավսլավական բանակը ստիպեց հիտլերյան վերջին խմբավորմանը ներքև դնել զենքերը, ովքեր փորձում էին Սլովենիայից մտնել ավստրիական սահման: Մարդկային և նյութական մեծ կորուստների գնով Հարավսլավիայի ժողովուրդը նպաստեց մեծ պայքարի հաջողությանը և արժանավոր ներդրում ունեցավ ֆաշիզմի պարտության հարցում:

Պատերաազմի տարիներին Հարավսլավիան կորցրեց 1,7 միլիոն մարդ: Նյութական կորուստները կազմում էին 46,9 մլրդ դոլար: Հարավսլավիայի ազատագրումը համարվում է նրա ժողովրդի երկար ազատագրական պայքարի արդյունք, որն իրականացվում էր Հարավսլավիայի կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո այն պայմաններում, երբ Սովետական Միությունը նշանակալից հաղթանակներ էր տանում ֆաշիստական Գերմանիայի և նրա համախոհների հանդեպ:[1]

1941թ. ապրիլին տեղի ունեցած շրջափակումն ու Հարավսլավիայի մասնատումը Հիտլերյան Գերմանիայի և նրա համախոհների կողմից հաստատեց «նոր կարգ»- բռնություն, քաղաքական հալածանքներ, տնտեսական թալան: Ֆաշիստների դեմ ուղղված ազատագրական պայքարն ուղղված էր ոչ միայն բռնատերերին, այլ նաև ղեկավարող շրջանակին, դա ազգային և սոցիալական ազատագրման պայքար էր, ուղղված նոր սոցիալիստական Հարավսլավիայի ստեղծմանը: Գյուղացիների աջակցությունը մեծ դեր ունեցավ այդ գործում, նրանց օգնությամբ ստեղծվեց Հարավսլավիայի ազգային ազատագրական մշտական բանակ: 1942թ. նոյեմբերի 26-27-ին Բիխաչում տեղի ունեցավ ընդհանուր հարավսլավական քաղաքական օրգանի սեսիան, ստեղծվեց Հարավսլավիայի ազատագրման ազգային

---

[1] Югославия в огне,. Документы, факты, комментарии (1990-1992). М., 1992
Волокитина Т.В., Мурашко Г.П., Носкова А.Ф., Народная демократия: миф ил реальност, Общественно-политические процессы в Восточной Европе.

կոմիտե Ի. Բրոզ Տիտոյի գլխավորությամբ որպես նոր Հարավսլավիայի ժամանակավոր ղեկավար, 2-րդ սեսիայի ժամանակ Հարավսլավիայի ներկայացուցիչը հանդես եկավ զեկույցով, ըստ որի պետք է ստեղծվեր բազմազգ սոցիալիստական պետություն:

Ամբողջ պատերազմի ընթացքում Սովետական Միությունը պաշտպանում էր Հարավսլավիայի ժողովուրդներին, նրանց ցուցաբերելով ռազմական, քաղաքական և դիվանագիտական օգնություն: Հանդես է եկել դեմ այն ծրագրին, որն ուղղված էր ազգային ազատագրական շարժման լիկվիդացմանը: 1944թ. սեպտեմբերի 28-ին սովետական բանակը Հարավսլավիայի ազգային ազատագրական կոմիտեի համաձայնությամբ հանդես եկավ Հարավսլավիայի տարածաշրջանում, շուտով նրանք ռազմական փոխգործունեության մեջ մտան հարավսլավական պարտիզան-ների և ազգային ազատագրական բանակի մի մասի հետ: Հարավսլավիայի ազգային ազատագրական բանակի մեջ էին մտնում շարքային զինվորները, որոնք կազմավորվել էին ԽՍՀՄ-ում: 1944թ. հոկտեմբերի 20-ին, ազգային ազատագրական բանակն ու կարմիր բանակը մեծ ջանքերի շնորհիվ ազատեցին Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադը: Շուտով նոյեմբերի 9-ին Բելգրադում տեղի ունեցավ առաջին ազգային ազատագրական խորհրդակցությունը:

Դեռևս արյունահեղ բախումներ էին տեղի ունենում Բոսնիայում և Հերցեգովի-նայում, Խորվաթիայում, Սլովենիայում, իսկ երկրի ազատագրված շրջաններում Սերբիայում, Մակեդոնիայում, Չերնոգորիայում տեղի էր ունենում ազգային-ազա-տագրական կոմիտեների գործունեությունը, ֆաշիստական խմբավորումների լիկվի-դացում, դավաճանների հայտնաբերում ու պատժում: Հարավսլավիային տրանսպոր-տի և մի շարք գործունեությունների կարգավորման մեջ աջակցություն է ցուցաբերել Խորհրդային Միությունը:

Արտաքին քաղաքական մոտիվները թելադրում էին այն փաստի անհրաժեշ-տությունը, որ Լոնդոնում գոյություն ունենար հարավսլավական էմիգրացիոն պետու-թյուն, որը աջակցվում էր Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից: 1944թ. համաձայնվեցին, որ միասնական ազգային-ազատագրական ֆրոն-տում սկսեցին գործել որոշ բուրժուական կուսակցություններ: 1944թ. նոյեմբերի 1-ին Տիտո-Շուբաշիչայի համաձայնության և 1945թ. փետրվարին Ղրիմի կոնֆերանսում,

որը տեղի էր ունեցել ԽՍՀՄ-ի դրդմամբ, հարավսլավական էմիգրացիոն կառավարությունը վերացավ: 1945թ. մարտի 7-ին մարշալ Ի. Բրոզ Տիտոն կազմավորեց Հարավսլավիայի դեմոկրատական ֆեդերատիվ ժամանակավոր ազգային կառավարություն, իսկ նրա անդամները 5-ն էին, որոնք նախկինում մասնակցություն ունեին էմիգրացիոն կառավարությունում, ընդ որում նաև գլխավոր նախարարը և արտաքին գործերի նախարար Ի. Շուբաշիչը, ով ժամանակավոր ազգային կառավարությունում զբաղեցնում էր արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

1945թ. ապրիլի 5-ին մարշալ Ի. Բրոզ Տիտոն ժամանեց Մոսկվա գլխավորելով հարավսլավական կառավարության պատվիրակությունը: Այստեղ ապրիլի 11-ին ստորագրվեց համաձայնագիր Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի միջև այն մասին, որ նրանք պետք է իրար օգնություն ցուցաբերեն: Դրանից հետո ստորագրվեց խորհրդա-հարավսլավական առևտրային համաձայնագիր: 1945թ. օգոստոսի 5-7-ին Բելգրադում տեղի ունեցավ Ազգային ճակատի կազմավորումը: 1945թ. օգոստոսի 29-ին Ազգային ժամանակավոր խորհուրդը, չնայած բուրժուական «դեմոկրատական հակադրմանը», որոշում ընդունեց գյուղատնտեսական ռեֆորմի մասին, որը փաստացիորեն ուղղված էր ամրապնդելու գրավված հողատարածքները: Ռեֆորմի հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ հողը պետք է պատկանի նրանց, ովքեր մշակում են այն: Հողամշակման առավելագույն թույլատրելի չափը կազմում էր 25-55 հա: Մահացածների հողատարածքները կամ անցնում էին պետությանը կամ դառնում գյուղացիների մասնավոր սեփականություն: Գյուղատնտեսական ռեֆորմի իրականացման համար կազմվեց Հարավսլավիայի դեմոկրատիվ ֆեդերատիվ ագրարային խորհուրդ և հատուկ տեղական հանձնաժողով:

Հարավսլավիայի հողային ռեֆորմը ի տարբերություն կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մի շարք երկրների չէր նախատեսում հողային վճարումներ, բայց որոշ անձիք բացառություն էին կազմում: Հողային ռեֆորմը գրեթե ամբողջությամբ վերացրեց եկեղեցու և մենաստանի հողային սեփականատիրությունը, ինչպես նաև ֆեոդալական հարաբերությունների միացյալ մասունքները, որոնք դեռևս պահպանվում էին հարավային և հարավ-արևմտյան երկրներում: Օրենքը հաստատում էր, որ ռեֆորմի արդյունքում ստացված հողը 20 տարիների ընթացքում չէր կարող բաժանվել, վաճառվել, վարձակալվել կամ մասնատվել:

Ագրարային հեղափոխությունը, ռեֆորմը ավարտվեց 1948թ.: Այդ ժամանակահատվածում, չնայած եկեղեցականների դժգոհության, ովքեր Սլովենիայում, Սերբիայում և Չերնոգորիայում համարվում էին ամենամեծ հողատերերը, ունեին 162 հազար տնտեսություն, 1,566 հազար հա ընդհանուր հողատարածքով:

797 հազար հա հողատարածք դարձավ գյուղացիների սեփականությունը, ընդ որում կազմավորվեց 70 հազար նոր տնտեսություն, 41510 հազարը Սերբիայում և 20 հազարը Սլովենիայում: Հողը ստանում էին ոչ միայն տեղի բնակիչները, այլ նաև այլ երկրներից վերաբնակիչները: Պետական գյուղատնտեսական տնտեսություններին էր պատկանում 290 հազար հա հողատարածք, կամ ամբողջ հողատարածքի 18%-ը:

Ընդհանուր առմամբ Հարավսլավիայի ռեֆորմը կրում էր ոչ միայն հակաֆեոդալական և հակատնտեսական բնույթ: Այն իրականանում էր դուրս մղելով հողը շուկայական շրջանառությունից, որը ուղեկցվում էր ոչ միայն զգալի պետական սպեկտորի ստեղծմամբ, այլ նաև գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների ստեղծմամբ: 1946 թվականին Հարավսլավիան դեռևս համարվում էր թույլ զարգացած գյուղատնտեսական երկիր: Նրա բնակչության 74%-ը գյուղաբնակ էր, բերքատվությունը միջին չափերի, հացահատիկը կազմում էր 11ց և 16ց եգիպտացորեն 1 հա-ից: Էլեկտրաէներգիան 1 անձի հաշվարկով կազմում էր 70կվ/ժ, երկաթը 6կգ, ածուխը 400կգ: 1947թ. ապստամբությունը զարգացրեց արդյունաբերությունը, նախապայման հանդիսացավ 1947-1951թթ. երկրի գյուղատնտեսական հնգամյա պլանի զարգացման համար:

Հետպատերազմական Հարավսլավիայի զարգացման գործում մեծ դեր ունեցավ մշակույթը:

Կառավարությունը հիմնական ուշադրությունը ուղղում էր անգրագիտության վերացմանը:

20-րդ դարի կեսերին՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին, Եվրոպան և աշխարհը ծանոթացան նոր հասկացողության «կոլլաբորացիոնիզմի» հետ: Կոլլաբորացիոնիստներ (կամ կվիսլինգուլներ) սկսեցին անվանել այն քաղաքացիներին, ովքեր օկուպացվել էին ագրեսիվ կառավարության կողմից (վերջիններս ծառայության էին գնացել նրանց մոտ):

Հակառակորդի մոտ ծառայության անցնելու պատճառները շատ բազմազան էին անձնական, ընտանեկան, խմբային, գաղափարական, էգոիստիկ, տնտեսական և այլն: Բայց այդ ամենը միասին որակավորվում էր որպես հայրենիքին դավաճանություն: Կոլաբորացիոնիստները ծառայում էին օկուպացիոն շրջանների կառավարությունում, բանակում և ոստիկանությունում, իրականացնում էին քարոզչական գործունեություն ի օգուտ զավթիչի, օգնելով նրան իր կառավարման տակ պահել զավթված երկրներն ու տարածքները: Զավթիչների պարտությունից հետո կոլաբորացիոնիստները հետապնդությունների ենթարկվեցին և ստացան իրենց արժանի պատիժը: Նրանց դատապարտում էին բանտարկության, իսկ մյուսները, սկզբնական շրջանում կախաղան էին բարձրացվում:

Բայց չնայած «առաջին ալիքի» կոլոբորացիիոնիստների տխուր վախճանին, նրանք շարունակեցին գոյատևել և զարգանալ ժաանակակից պայմաններում: Երկրներից մեկը, որում Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ծաղկում էր ապրում կոլաբորացիոնիզմը, դա Հարավսլավիան էր: Եվ փորձենք նրա օրինակով հասկանալ հարավսլավական կոլաբորացիոնական խնդիրները:

Հարավսլավական կոլաբորացիոնիզմի ռաումնասիրությունը հայրենական պատմական գիտությունում սկսվել է միայն վերջին ժամանակներս:

Խորհրդային ժամանակաշրջանում կոլաբորացիոնիզմի խնդրին անդրադարձը շատ պարզունակ էր: Կոլաբորազիոնիզմ արտահայտության տակ հասկանում էին մարդու հասարակ հետաքրքրություններ փրկվել ցանկացած գնով, ցանկություն վրեժ լուծել սեփական վշտերի և անհաջողությունների համար, ցանկություն ստանալ իշխանություն մյուսների հանդեպ և այլն:

Այդ երևույթի, ֆենոմենի լուրջ ուսումնասիրությունը սկսվել է XX-րդ դարի 80-90-ական թվականներին: Կոլաբորացիոնիզմի խնդրի ուսումնասիրման մեջ հիմք է դրել Մ. Ի. Սեմիրյագը իր «Կոլաբորազիոնիզմ, նրա բնույթը, առանձնասիրությունը և էությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» աշխատությունում: Նա իրականացնում է այդ երևույթի ոչ միայն տեսական, այլ նաև կոնկրետ, մասնակի գործողությունների ռաումնասիրություն:

Մ. Ի. Սեմիրյագը իր «Կոլաբորացիոնիզմը, նրա բնույթը, առանձնասիրությունը և էությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» աշխատությունը

նվիրված է հարավսլավական կոլոբորացիոնիստներին, ովքեր պատերազմի տարի-ներին կռվում էին Գերմանիայի կողմից, դիտարկվում է նաև Հարավսլավիայի քաղաքական վիճակը պատերազմի տարիներին, հիմնականում Սերբիայի դիրքը և նրա դիմակայման խնդիրը սերբական ազգային ազատագրիչների Մ.Նեդիչի, Դ. Միխայիլովիչի և խորվաթական Ա. Պավելիչի գլխավորությամբ:

Կոլաբորացիոնիզմի կոնկրետ արտահայտումները պատերազմում հիտլերյան Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի մասնակցությամբ, վերլուծվում է նաև Կ.Ա. Զելինսկու աշխատություններում:

Հարավսլավիայի ժողովրդի XX դարաշրջանի կյանքի խնդրին նվիրված է մի կոլեկտիվ մենագրություն Ե.Պ. Սերապինովի հրատարակությամբ:

Աշխատությունում ներկայացված է Հարավսլավիայի խնդրի ամբողջական և բազմակողմանի վերլուծություն: Հեղինակի ուշադրության կենտրոնում են ազգու-թյունները և ազգային փոքրամասնությունները, դիմակայուն շարժումը և Կոլաբորա-ցիոնիզմը, քաղաքական կուսակցությունները, բարեգործական և հասարակական կազմակերպությունները, էմիգրանտները, փախստականները, կանայք, երիտասար-դությունը, ստեղծագործ մտավորականությունը: Մեծ դեր է հատկացված կրոնական և ազգային խնդրին:

1970 թվականին ԽՍՀՄ-ում լույս տեսավ մի հետաքրքիր մենագրություն Մ. Գուրիչի կողմից, այն էր «Հարավսլավիայի բազմազգ պետության կազմավորումը»: Մ. Գուրիչի այդ աշխատությունը նվիրված է Հարավսլավիայի որպես մեկ պետության, կազմավորման խնդրին:

Դիտարկելով ազգային հակասությունների խնդիրները, որոնք կարող էին հան-գեցնել հակասությունների, բախումի, հեղինակը գալիս է եզրակացության, որ հիմնա-կան խնդիրը կայանում է նրանում, որ Հարավսլավիայի պետությունը կազմավորվել է իրարից խիստ տարբեր հարավսլավական հողերի համախմբմամբ: Նրանց շարքե-րում էին այնպիսի պետություններ, ինչպիսիք էին Սերբիան, Չերնոգորիան, այնպես էլ Ավստրո-Վենգրիան, Խորվաթիան, Բոսնիան և Հերցեգովինան, Սլովենիան և այլն: Եվ նրանցից շատերը, անկախ իրենց գոյության սկզբնավորման ժամանակաշրջանից, չունեին պայմանական փորձ, որն էլ նպաստեց ապագա ստեղծվելիք կոնֆլիկտների առաջացմանը:

Ուշագրավ է նաև Է. Գ. Գուսկովի «Ալբանական ազգային շարժումը և ալբանական հողերի միացման գաղափարը», որում դիտարկվում է ալբանացիների և սերբերի փոխհարաբերության խնդիրը այնպիսի շրջաններում, ինչպիսիք էին Կոսովոն և Մետոխիան:

Հեղինակը նշում է, որ հայրենական պատմական գիտությունը հիմնականում ուսումնասիրել է Ալբանիայի կամ Հարավսլավիայի պատմությունը որպես պետություն, իսկ Հարավսլավիայի առանձին շրջանների, ինչպիսիք են Կոսովոն և Մետոխիան, Մակեդոնիան կամ Չերնոգորիան, միջազգային հակասությունները հատուկ նպատակային ռաումնասիրության և հետազոտության առարկա չեն եղել:

Գոակովան կատարում է վերլուծություն, թե ինչպես է առաջացել ալբանացիների և Հարավսլավիայի այլ ազգությունների ռեակցիան հարավսլավական զավթիչների օկուպացման հանդեպ, նշելով, որ ալբանացիները գերմանական և իտալական զորքերին դիմավորել են որպես ազատագրիչներ, հույս ունենալով դրանց միջոցով ստեղծել մեկ միասնական ազատ ալբանական պետություն:

Բերված օրինակներն ապացուցում են, որ հարավսլավական Կոլաբորացիոնիզմի խնդրի դիտարկումը նախորդ տարիներին ուղղորդվել է դեպի խնդրի տեսական վերլուծություն, կամ Հարավսլավիայի ազգային կողմի վերլուծություն: Դա, ինչպես հետևում է վերոնշյալից, մեզ իրավունք է տալիս կրկին փորձել ուսումնասիրել հարավսլավական Կոլաբորացիոնիզմի արտահայտման պատճառները, էությունը և կոնկրետ արտահայտումը: Մեր հետազոտության օբյեկտ է համարվում Հարավսլավիայի XX դարի պատմությունը:

Համապատասխանաբար, մենք հետազոտության առարկա ենք ընտրել տվյալ պետության պատմությունը երկու Համաշխարհային պատերազմների միջև և Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ազգային խմբերի և նրանց փոխազդեցության ենթատեքստում՝ 1941-1944 թվականների օկուպացիոն կառավարությամբ:

Հետազոտության նպատակը կայանում է նրանում, որ ուսումնասիրելով Հարավսլավիայում պատերազմական տարիներին ազգությունների միջև առկա հակասությունները, հասկանալ 1389 թվականի հունիսի 28-ին Կոսովոյի դաշտում պարտության մատնվեց միջնադարյան սերբական պետության բանակը, այն ջախջախվել էր թուրք սուլթան Մուրադ 1-ի զորքերի կողմից:

Դրանից հետո, երկար հարյուրամյակներ, Սերբիայի վրա կուտակվել էին սև գիշերները: Եվ միայն 1878 թվականինէր, որ թուրքերի հետ երկար մարտերից հետո, Սերբիան վերջնականապես անկախություն ստացավ:

Չերնոգորիան մի քանի հարյուրամյակներ շարունակ պայքարում էր Օսմանյան թագավորության դեմ իր անկախության համար և միայն 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո նա կարողացավ ամրապնդել իր պետությունը:

Իսկ ինչ վերաբերում է Խորվաթիային և Սլովենիային, ապա նրանք դեռևս միջին դարերում էին կորցրել իրենց անկախությունը: Խորվաթիան 1102 թվականին ներառվել է Վենգրիական թագավորության մեջ, իսկ XVI դարում Վենգրիան ընկել է Հաբսբուրգի տիրապետության տակ: Այդ ժամանակաշրջանում վերջինիս սկսեցին պատկանել և այն տարածաշրջանները, որտեղ ապրում էին սլովեներենը:

1867 թվականին Ավստրիական թագավորությունը բաժանվել էր երկու մասերի ավստրիական կամ Ցիսլեյրանիա և վենգրիական կամ Տրանսլեյրանիա, որոնց միջև պայմանական սահմաններն անցնում էին Լեյտե գետով: Այդ երկու մասերը փաստացի իրար հավասար էին, բայց Ավստրիան ուներ մի շարք առավելություններ: Ավստրիական մասի մեջ էին մտնում Սլովենիան Իսրբիան, Շտիրիան, Կարինրիան, իսկ վենգրիականին էր պատկանում Խորվաթիան, Սլավոնիան, Դալմացիան: Այդ տարածաշրջանի բնակչությունը խառն էր:

1868 թվականին Վենգրիայի և Խորվաթիայի միջև ստորագրվել է հավելյալ համաձայնագիր, այսպես կոչված «նագոդբա», որը վերջինիս հավելյալ իրավունքներ էր տալիս, որոնք չկային հարավսլավական մյուս հողերում, իսկ Խորվաթիան պահպանում էր իր պատմական «Դալմացիայի, Խորվաթիայի, Սլավոնիայի թագավորություն» անվանումը, դրանով իրավունք ստացավ ընտրել տեղական խորհրդարան:

Խորվաթիան իր ներկայացուցիչներին ուղարկում էր վենգրիական խորհրդարան, ուներ ազգային խորհուրդ, պետական գերբ, տեղական ինքնակառավարման մարմիններ: Սակայն նա այդպես էլ չդարձավ անկախ պետություն, քանի որ շատ հարցերում հնազանդվում էր Վենգրիային:

Խորվաթիայում Վենգրիան նշանակում էր իր կառավարչին կամ թագավորական հանձնակատարին, ով կարող էր դադարեցնել ցանկացած օրենք, որն ընդունվել էր

խորվաթների կողմից: Խորվաթիան չուներ իր բանակը, զրկված էր միջազգային հարցեր և գործեր իրականացնելուց:

Ավելի քիչ իրավունքներ ունեին Ցիսլեյրանի հարավսլավական շրջանում: Սլովենիայի, Իստրիխ Շտիրիի և այլ շրջանների բնակչությունը ընտրում էր իր տեղական օրենսդրական կառավարությունը լանդտագերը և իշխանության օրգաններ, բայց գտնվում էին վերին վերահսկման տակ, իսկ այդ վերահսկիչը նշանակվում էր Վիեննայից: Ակնհայտ առկա էր անհավասարությունը ավստրիական ռեյխստաբի ներկայացուցչական չափանիշների միջև:

Սլովենիան, փաստացի, չէր մասնակցում ավստրիական կառավարության աշխատանքներին:

Դժվարին էր նաև Բոսնիայի և Հերցեգովինայի ժողովուրդների ճակատագիրը: Դեռևս XV դարում Բոսնիան և Հերցեգովինան գրավվել էին թուրքերի կողմից, իսկ 1878 թվականին օկուպացվել էին Ավստրո-Վենգրիայի կողմից, 1908 թվականին վերջնականապես մտել են նրա կազմի մեջ: Բոսնիայի և Հերցեգովինայի բնակչությունը (նրանց մեծ մասը կազմում էին թրքացված սերբերը, կոչվում էին «մուսուլմաններ») խախտում էին իրենց քաղաքացիական իրավունքները: Այդ շրջանները կոչվում էին ռեյխսլանդներ և գտնվում էին ինչպես Ավստրիայի, այնպես էլ Վենգրիայի իրավասության ու ենթակայության ներքո:

Ծերին կատարողական իշխանությունը պատկանում էր գեներալ-նահանգապետին, ով միաժամանակ համարվում էր զինվորական շրջանի հրամանատար:

Ազատության և անկախության պահանջի սրացումը դարձավ հարավսլավական բազմաթիվ ազգերի գերխնդիրը:

Դուալիզմի համակարգը սպառում էր իր դարաշրջանը: Այն դադարեցրեց արտադրողական ուժերի զարգացումը և դժգոհություն առաջացրեց հարավսլավական քաղաքական կուսակցությունների մոտ:

Եվ միայն Խորվաթական կառավարական բլոկը Խորվաթ-սերբական կոալիցիան շարունակեց աջակցել 1868 թվականի համաձայնությանը, մյուս կուսակցությունները ցանկանում էին վերանայել համակարգը, ուղղորդվելով տրիալիզմ, այսինքն նրան, որ Ավստրիային և Վենգրիային հատկացվեն հավասար իրավունքներ: Այս պահանջները կրում էին մասնակի բնույթ, քանի որ հարավսլավական հողերի կուսակցությունները

չէին բարձրացրել անկախ պետության կազմավորման հարցը սահմանափակվելով Հաբսբուրգի միապետության որոշման շրջանակով: Բարեփոխումների դիրքորոշ-մանը կողմնակից էին Խորվաթիայի, Սլավոնիայի, Սլովենիայի և Բոսնիա և Հերցեգովինայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները:

Նրանց ծրագրային դիրքորոշումները չանցան նաև հարավսլավական տարածաշրջանի մշակութա-ազգային ինքնավարության ընդլայնման պահանջից:

Հարավսլավական կուսակցությունների քաղաքական ծրագրերում առկա փոփոխությունները սկսվեցին իրականացվել միայն Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, երբ անկում էր ապրում դուալիստական համակարգը:

1.2. Հարավսլավիայի տնտեսական խնդիրները

1980-ական թվականներին Հարավսլավիայում շարունակում էին ծավալվել տնտեսական խնդիրները: 1983 թվականի հուլիսին ընդունվեց տնտեսական կայունացման ծրագիր, որն ուղղված էր արտադրողականության հզորացմանը, զբաղվածության աճին, ձգտում էր նվազեցնել և կասեցնել գնաճը, ինչպես նաև դեմ էր դաժան քաղաքականությանը: Սակայն ծրագիրը չունեցավ շոշափելի արդյունքներ:

1987 թվականին երկրի արտաքին պարտքը գերազանցում էր 19 միլիարդ դոլլարը: Տնտեսական և սոցիալական դժվարությունները վատթարացրին հարաբերությունները Հարավսլավիայի տարբեր շրջանների միջև և նպաստեցին ազգայնական հակասություններին: 1986 թվականին Սերբիայի Ակադեմիայի մի շարք անդամներ հանդես եկան սուր քննադատություններով, որոնք ուղղված էին ֆեդերացիային: Նրանք պահանջում էին ուժեղացնել Սերբիայի դերը Հարավսլավիայում:

Կոսովոյի Ինքնավար մարզում, որը մտնում էր Սերբիայի կազմի մեջ, սկսվեց ալբանացիների բողոքը, ովքեր պահանջում էին ավելի մեծ ծավալի ինքնավարություն և նույնիսկ ցանկանում էին ստեղծել Կոսովոյի առանձին հանրապետություն:

Ի պատասխան Սլոբոդան Միլոշևիչը, ով 1987 թվականին ղեկավարում էր «Սերբիայի կոմունիստների միությունը», գնաց զիջումների Կոսովոյի և Վոյեվոդինայի ինքնավարության հարցում, իսկ 1990 թվականին Կոսովոյի ինքնավարությանը վերջ տրվեց և ներմուծվեց սերբական կառավարում: Միլոշևիչի քաղաքականությունը

ուղղված էր Հարավսլավիայում սերբերի դերի ամրապնդմանը, նրանք պետք է հանդես գային որպես ֆեդերացիայի ամրապնդման ուժ:

Հարավսլավիայում կուսակցության նոր ղեկավար Միլան Կաչանը (1986 թվականից) սկսեց տնտեսության և հասարակական կյանքի ազատականացման գործընթացը: Ազգայնական տրամադրվածություն ունեցող սլովենական և խորվաթական կառավարությունը հանդես եկավ Միլոշևիչի դեմ:

Հարավսլավական կառավարությունը Անտե Մարկովիչի գլխավորությամբ (իշխանության գլուխ է ելել 1989-1992թթ), փորձեց բարելավել երկրի վիճակը, սահմանելով վերահսկողություն տնտեսության, աշխատավարձի և տնտեսության ազատականացման վրա: Նկատվում էր անցում շուկայական տնտեսության, ներդրվում էր հավասար սեփականության ձևը, իսկ քաղաքական ոլորտում ներդրվում էր բազմակուսակցական համակարգ և ստեղծվում էր իրավական պետություն:

1990 թվականին հաջողվեց կանգնեցնել և նվազեցրեց արտաքին պարտքերը: Սակայն լիբերալիզացման արդյունքում տնտեսության վիճակի հետագա վատթարացումը հանգեցրեց գործադուլների և բողոքների ալիքի, հատկապես Սերբիայում, Վոեվոդինում և Չերնոգորիայում: Մի շարք առաջատար գործիչներ հրաժարական տվեցին:

«Հարավսլավիայի Կոմունիստների Միության» 14-րդ արտահերթ համագումարը տեղի ունեցավ 1990 թվականի հունվարին, Միլոշևիչը հանդես եկավ կոչով հրաժարվել սահմանադրորեն ամրագրված օրենքներից և քվեարկել «մեկ անձ-մեկ ձայն» սկզբունքի օգտին (այն կապահովեր սերբերի գերակայությունը ֆեդերատիվ մակարդակում ղեկավարելու համար): Սլովենիայի և Խորվաթիայի պատվիրակները, ովքեր շեշտը դրել էին տնտեսական և քաղաքական ազատականացման վրա, հեռացան կոնգրեսից, որից հետո «Հարավսլավիայի կոմունիստական լիգան» փաստացիորեն անկում ապրեց:

Արդյունքում 1990-ական թվականների բազմակուսակցական ընտրությունների Սլովենիայի խորհրդարանական ընտրություններում հաղթանակը տարավ ոչ կոմունիստական ընդդիմադիր կուսակցության կոալիցիան, իսկ Խորվաթիայում «Խորվաթիայի ազգայնական միավորման» ընդդիմադիր ազգայնական կուսակցությունը Տուջմանի գլխավորությամբ, Բոսնիայում և Հերցեգովինայում Բոսնիայի մահմեդական-

ների, խորվաթների և սերբերի ազգայնական կուսակցությունները, իսկ Մակեդոնիայում ազգայնական «Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը»:

Սլովենիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Մակեդոնիայի ազգային կուսակցությունները անկախություն էին պահանջում: Սերբիայում և Չերնոգորիայում իշխանության գլուխ մնացին «Հարավսլավիայի Կոմունիստների Միության» ժառանգները:

1990 թվականի աշնանը Սլովենիայի և Խորվաթիայի ղեկավարները առաջարկեցին Հարավսլավիան դարձնել վեց հանրապետությունների կոնֆեդերացիա, սակայն Սերբիայի կառավարությունը մերժեց այդ առաջարկությունը հանդես գալով պետության միասնականության կողմից:

Մյուս հանրապետությունները դա ընկալեցին որպես փորձ իրենց ձեռքից խլելու սերբերով բնակեցված շրջանները: 1991 թվականի մարտին խորվաթական ազգայնականները սկսեցին պայքար մղել Խորվաթիայում, որին ավելի ուշ միացավ հարավսլավական բանակը:

Հունիսի 25-ին Սլովենիան և Խորվաթիան միակողմանի կարգով հռչակեցին իրենց անկախությունը և հարավսլավական բանակը ուղարկվեց հանրապետության կարգի պահպանման համար: Սակայն Հարավսլավիայի ազգային բանակը ճանապարհին պարտություն կրեց, հալածվեց սլովենական տարածքային զորքերի կողմից:

Հուլիսի 3-ին կարճաժամկետ ռազմական գործողությունները կասեցվեցին օտար ուժերի կողմից: Ստացած համաձայնության արդյունքում հարավսլավական զորքերը դուրս բերվեցին Սլովենիայից և Խորվաթիայից, իսկ այդ հանրապետությունները համաձայնեցվեցին Եռամսյա մորատորիումում անկախության հռչակման շուրջ:

1991 թվականին Սլովենիան և Խորվաթիան դարձան անկախ պետություններ, Խորվաթիայում պատերազմ սկսվեց կառավարության և սերբերի միջև, որոնք չէին ցանկանում առանձնանալ Հարավսլավիայից և հայտարարեցին սերբական շրջանի անկախ պետության ստեղծման մասին:

Նույն թվականի սեպտեմբերին Մակեդոնիան ևս հռչակեց իր անկախությունը, 1992 թվականի սկզբին Բոսնիան և Հերցեգովինան: 1992 թվականի ապրիլի 28-ին Սերբիան և Չեռնոգորիան ընդունեցին նոր սահմանադրություն, որը հաստատում էր

Հարավսլավիայի հանրապետության (այժմ Սերբիա և Չեռնոգորիա) Դաշնային հանրապետության ստեղծումը:[2]

[2] Гуськова Е., Югокризис начал разрастаться с момента его интернационализации, Международная жизнь. 2006, С.73-84.

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ՓԼՈՒԶՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

2.1. Տասնօրյա պատերազմը և Սլովենիայի անկախացումը

Հարավսլավիայի կազմում Սլովենիան համարվում էր տնտեսապես ամենազարգացածը: Բնակչության 90%-ը սլովեններ էին, իսկ 2,2%-ը սերբեր: 1990թ. սկզբներին Սլովենիայի պաշտոնական անվանումից նախ հանվեց սոցիալիստական բառը, որից հետո տեղական իշխանություններին ենթարկեցին այդտեղ գտնվող զինված ուժերին: Հուլիսի 2-ին տեղի Սկուպշինան կամ պառլամենտը ընդունեց անկախության հռչակագիրը: Հոկտեմբերի պառլամենտը հայտարարեց, որ միութենական 27 օրենքներ Սլովենիայում չունեն իրավական ուժ, իսկ հետայսու ոչ մի օրենք չի գործի առանց տեղական պառլամենտի հավանության: Դեկտեմբերի 23-ին Սլովենիայում հանրաքվե անցկացվեց և բնակչության 88,5%-ը կողմ քվեարկեց Հարավսլավիայից անջատվելու օգտին: 1991թ. հունիսի 25-ին Սլովենիայի ղեկավարությունը հայտարարեց, որ իր հսկողության տակ է վերցնում հանրապետության օդային տարածքն ու սահմանները և հրամայեց տեղի զինված ուժերին գրավել Հարավսլավական բանակի- ՀԲ- զինանոցները, որին ի պատասխան Հարավսլավիայի վարչապետ Մարկովիչը հրահանգ տվեց հարավսլավական բանակի ղեկավարությանը հսկողության տակ վերցնել իրավիճակը Լյուբլյանայում՝ Սլովենիայի մայրաքաղաքում:

ՀԲ հարձակումը լուրջ դիմադրության արժանացավ, Ավստրիայի սահմաններին, որոնք ուղղությամբ շարժվելու էր ՀԲ-ն բարիկադներ կառուցվեցին, Սլովենիայում հայտարարվեց զորահավաք, երկիրը դիմեց մի շարք եվրոպական պետությունների օգնության խնդրանքով: Հուլիսի չորսին ռազմական գործողությունները դադարեցվեցին: Տասնօրյա պատերազմի ընթացքում զոհվեցին ՀԲ 45 մարտիկներ, 146-ը վիրավորվեցին, 4693 զինվոր գերի վերցվեց: Սլովենիայից զոհվեցին 19-ը, վիրավորվեցին 182 մարդ: Շարքից հանվեցին 31 տանկ, 22 զրահամեքենա, 172 տրանսպորտային միջոց, 6 ինքնաթիռ: Պատերազմն ավարտվեց 1991թ. հուլիսի 7-ի Բրիոնյան համաձայնագրով, ըստ որի ՀԲ-ն պարտավորվեց դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ Սլովենիան և Խորվաթիան երեք ամսով կասեցրեցին անկախության հռչակագրի ուժի մեջ մտնելը:

2.2. Խորվաթական պատերազմը

Սերբերը խորվաթական հողերում բնակություն էին հաստատել դեռևս XIV դարից: Դա պայմանավորված էր սերբերի փախուստով Օսմանյան թուրքիայի գրաված տարածքներից և վերջինիս հետ ավստրիական Հաբսբուրգների կառուցած ռազմական սահմանով: 1918թ. Խորվաթիան մտնում էր Հարավսլավիայի կազմի մեջ, չնայած երկրորդ աշխարհամարտի տարիներին կար անկախ խորվաթական պետություն, որը համագործակցելով Հիտլերի հետ սերբերի ցեղասպանություն էր իրականացնում: Միևնույն ժամանակ 1941 մայիսին որոշ սերբ ազգայնականներ համագործակցելով Հիտլերի հետ էթնիկ զտումներ էին կատարում՝ մաքրելով տարածքները խորվաթներից և մուսուլմաններից:

Ազգամիջյան հարաբրությունների սրման ֆոնի վրա, Խորվաթիայի սահմանադրության մեջ փոփոխություններ կատարվեցին, ըստ որի Խորվաթիան հռչակվեց պետություն խորվաթների համար, արգելվեց կիրիլիցան: Ի պատասխան Խորվաթիայում ապրող սերբերը 1990 թ. Կրաինան հռչակեցին ինքնավար մարզ, իսկ 1991 ապրիլին որոշում ընդունեցին դուրս գալ Խորվաթիայի կազմից և միանալ Սերբիային: Այդ որոշումը հաստատվեց հանրաքվեով: 1991թ. հունիսի 25-ին սլովենիան և Խորվաթիան իրենց անկախ հռչակեցին:[3] Հարավսլավական բանակի տասօրյա ռազմական ակցիան Սլովենիայի դեմ անարդյունք ավարտվեց: Դրանից հետո, օգոստոսին հարավսլավական բանակը լայնամաշտաբ գործողություններ սկսեց խորվաթական ջոկատների և ոստիկանության դեմ: Պաշարվեցին Դուբրովնիկ և Վուկովար քաղաքները: Դեկտեմբերին հռչակվեց անկախ սերբական Կրաինա հանրապետությունը: 1992թ. հունվարին կողմերի միջև համաձայնագիր կնքվեց կրակի դադարեցման մասին, որը XV էր: Մարտին այստեղ մտցվեցին ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը: Արդյունքում Խորվաթիան պահեց իր անկախությունը, բայց զրկվեց սերբերով բնակեցված տարածքներից: 1992թ. մայիսի 24-ին Խորվաթիայի նախագահ Ֆրանո Թուջմանը ելույթ ունենալով Զագրեբի Բանա Ելաչիչի հրապարակում հայտարարեց, որ պատերազմ չէր լինի, եթե Խորվաթիան դա չուզեր: Հաջորդ երեք տարիների ընթացքում Խորվաթիան ուժեղացրեց իր բանակը, մասնակցեց Բոսնիայում ընթացող

[3] The War in Croatia and Bosnia-Herzegovina, 1991-1995, ed. Branka Magas and Ivo Zanic. Frank Cass, London, 2001

քաղաքացիական պատերազմին և մի քանի ռազմական ակցիաներ իրականացրեց Կրաինայի դեմ: 1995թ.խորվաթական ուժերը «Կայծակ» գործողության արդյունքում վերահսկողություն հաստատեցին արևմտյան Սլավոնիայում, իսկ սերբերը հրթիռակոծեցին Զագրեբը: Օգոստոսին խորվաթները իրականացրեցին «Փոթորիկ» գործողությունը և ճեղքեցին Կրաինայի սերբերի պաշտպանությունը, որից հետո մտնելով Բոսնիա տեղի մուսուլմանների հետ ռազմկան գործողություններ սկսեցին Բոսնիայի սերբերի դեմ:

ՆԱՏՕ-ի միջնորդությամբ զինադադար կնքվեց, իսկ 1995թ. դեկտեմբերի 14-ին ստորագրվեց Դեյտոնի համաձայնագիրը: Պատերազմի արդյունքում զոհվեց 26.000 մարդ:[4]

2.3 Պատերազմը Բոսնիայում

Հարավսլավիան հանդիսանում էր բազմազգ ֆեդերատիվ հանրապետություն, բաղկացած միութենական հանրապետություններից: 1989թ. Բեռլինի պատի անկումից հետո այստեղ ևս սրվեց ազգամիջյան հարց:[5] Նախ անկախացան Սլովենիան և Խորվաթիան, իսկ 1992թ. մարտի մեկին Բոսնիա-Հերցոգովինայում հանրաքվե անցկացվեց անկախության հռչակման մասին: Սակայն սերբերը, որոնք կազմում էին բնակչության մեկ երրորդը բոյկոտեցին հանրաքվեն և հայտարարեցին, որ չեն ենթարկվում նոր ղեկավարությանը: Նրանք ապրիլի տասից սկսեցին կազմավորել իշխանության սեփական մարմինները Բանյա-Լուկա քաղաքում:[6] Այս շարժումը ղեկավարում էր Ռադովան Կարաչիչի դեմոկրատական կուսակցությունը: Նոր կառավարության և սերբական ջոկատների միջև բախումներ սկսվեցին, որոնք վերաճեցին լայնամաշտաբ պատերազմի, որի ընթացքում երկու կողմերն էլ էթնիկ զտումներ կատարեցին: Հատկապես հայտնի է Սերեբրենիցայի ջարդը:

1992թ. մարտի 26-ին խորվաթական բանակը ներխուժեց Բոսնիա-Հերցոգովինա և զինված մուսուլմանների հետ սպանեցին մի քանի տասնյակ սերբերի: Սիեկովա-

---

[4] О. В. Валецкий, Истоки и течение сербско-албанской борьбы за Косово и Метохию, Часть 2.

[5] Allcock, John B. et al. Conflict in the Former Yugoslavia. ABC-CLIO, Denver, 1998

[6] Dejiny Srbska.-Praha, 2004. - ISBN 80-7106-671-0; Dizdarevic R. Od smrti Tita do smrti Jugoslavie. - Praha, 2002; Тягуненко Л. В. Союзная республика Югославия на рубеже XXI века

ցումի պատասխան սերբերը հարավսլավական բանակի օգնությամբ ապրիլի վեցին պաշարեցին Սարաևոն, իսկ ապրիլի 8-ին գրավեցին Զվորնիկը:

Սարաևոյի օդանավակայանում ձերբակալեցին բոսնիացիների առաջնորդներից Ալյա Իզիտբեգովիչին, որին բաց թողեցին Սարաևոյի հարավսլավական բանակի զինանոցների էվակուացիայի դիմաց:

Մայիսի 6-ին ավստրիական Գրացե քաղաքում Ռադովան Մատե բոբանի միջև համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի սերբերն ու խորվաթները դադարեցրեցին կոնֆլիկտը, որպեսզի կենտրոնանան այն տարածքների վրա, որոնք զբաղեցրել են Բոսնիացի մուսուլմանները: 1992թ. հունիսի 7-26-ը խորվաթական բանակը իրականացրեց «հունիսյան լուսաբաց» գործողությունը և հարավսլավական բանակից մաքրեց Ներետվա գետի հովիտը, որի արդյունքում հաստատվեց այն սահմանը, որ այսօր կա Բոսնիա-Հերցոգովինայի ֆեդերացիայի խորվաթական բնակատեղիների և Բոսնիա-Հերցոգովինայի սերբական հանրապետության միջև: Հունիսի 29-ին միջազգային ճնշման տակ սերբերը դադարեցրեցին սարաևոյի օդանավակայանի շրջափակումը հնարավորություն տալով հումանիտար օգնություն հասցնել քաղաքացիական բնակչությանը: 1993թ. ապրիլի 18-ին ՄԱԿ-ի ԱԽ-ը սերեբրենիցան հայտարարեց միջազգային խաղաղապահ գոտի, իսկ մայիսի 6-ին անվտանգության գոտիներ հայտարարվեցին մուսուլմանական բնակավայրեր հանդիսացող Սարաևոն, Տուզլան, Բիխաչը, Գորաժդեն, Սերեբրենիցան, ժեպան: Օգոստոսի 24-ին խորվաթները հայտարարեցին Հերցոգ-Բոսնիա խորվաթական պետության ստեղծման մասին, իսկ սեպտեմբերի 27-ին Վելիկա-Կլադուշի մուսուլմանները Ֆիկրետ Ադբիչի ղեկավարությամբ իրենց անկախ հռչակեցին Ալի իզիտբեգովիչից և ստեղծեցին Արևմտյան Բոսնիայի հանրապետությունը: 1994թ փետրվարի 23-ին խորվաթական պաշտպանության խորհրդի գեներալ Անտե Ռոսոն և Բոսնիա-Հերցոգովինայի բանակի հրամանատար Ռասիմ Դելիչի Զագրեբում համաձայնագիր ստորագրեցին բոսնիա-խորվաթական հակամարտության դադարեցման մասին: Փետրվարի 28-ին ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերը ոչնչացրեցին չորս սերբական ռմբակոծիչներ: Մարտի 18-ին Ալիա Իզիտբեգովիչը և Խորվաթիայի նախագահ Ֆրանո Թուջմանը ստորագրեցին Վաշինգտոնյան համաձայնագիրը, ըստ որի խորվաթական Հերցոգ-Բոսնիան և մուսուլմանական Բոսնիան միավորվեցին Բոսնիա- Հերցոգովինայի դաշնության մեջ: Ապրիլի 25-ին ստեղծվեց

կոնտակտային խումբ Բոսնիա-Հերցոգովինայի հարցերով, որի մեջ մտան ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը: Օգոստոսի 4-ին Սերբական հանրապետությունը ընդունեց կոնտակտային խմբի առաջարկը, ըստ որի Բոսնիա-Հերցոգովինայի տարածքի 49%-ը անցնում էր սերբերին, իսկ 51 %-ը խորվաթներին: Հաջորդ օրը Հարավսլավիան փակեց սահմանը Սերբական հանրապետության հետ: Այդ ընթացքում Բոսնիայի մուսուլմանները գրավում են Արևմտյան Բոսնիայի հանրապետությունը՝ ստիպելով 40.000 մուսուլմանների անցնել սերբական Կրաինա, բայց դեկտեմբերի 17-ին «Սարդ» գործողության արդյունքում Աբդիչի կողմնակիցները հետ են գրավում Արևմտյան Բոսնիան: 1995թ. հուլիսի 11-ին Բոսնիայի սերբերը Ռադկո Մլադիչի գլխավորությամբ գրավում են Սերեբրենիցան՝ կոտորելով 8 000 մուսուլմանների:

Հուլիսի 16-ին Հարավսլավիայի հարցերով միջազգային տրիբունալը հրահանգում է ձերբակալել Ռադովան Կարաջիչին և Ռադկո Մլադիչին: Հուլիսի 25-ին սերբերը գրավեցին ժեպա քաղաքը, իսկ օգոստոսի 30-ին ՆԱՏՕ-ն ռազմական գործողություններ սկսեց Բոսնիայի սերբերի դեմ, որոնք հրաժարվեցին դուրս բերել ծանր սպառազինությունները Սարաևոյից: Հոկտեմբերի 5-ին Ռիչարդ Հոլբրուկը հայտարարեց երկամսյա զինադադար կապված բանակցությունների սկսման հետ: Նոյեմբերի 21-ին Ալիա Իզիտբեգովիչը, Ֆրանո Թուջմանը և Սլաբոդան Միլոշեվիչը ստորագրեցին Դեյտոնի համաձայնագիրը, որը դեկտեմբերի 14-ին վավերացվեց Փարիզում: Պատերազմի արդյունքում զոհվեցին ավելի քան հարյուր հազար մարդ:

2.4. Կոսովոյի պատերազմը

1989թ.[7] մարտի 28-ին Սերբիայի պառլամենտը չեղյալ հայտարարելով 1974թ. սահմանադրությունը վերականգնեց Սերբիայի ինքնիշխանությունը Կոսովոյի նկատմամբ:[8]

Սլաբոդան Միլոշեվիչը մասնակցելով Կոսովոյի ճակատամարտի 600 ամյակին հունիսի 28-ին միլիոնանոց հանրահավք անցկացրեց: 1989-1990 թթ. հակաբյուրոկրատական հեղափոխության շրջանակներում Միլոշեվիչը արձակեց Կոսովոյի պառլա-

[7] О. В. Валецкий. Истоки и течение сербско-албанской борьбы за Косово и Метохию.Часть 1
[8] О. В. Валецкий. Истоки и течение сербско-албанской борьбы за Косово и Метохию. Часть 2

մենտն ու կառավարությունը, ալբանացիները ազատվեցին զբաղեցրած պաշտոն-ներից:

1991թ. սեպտեմբերին Հարավսլավիայի փլուզումից հետո գաղտնի հռչակվեց Կոսովոյի հանրապետությունը, որը ճանաչվեց միայն Ալբանիայի կողմից: Ստեղծվեց ստվերային իշխանություն:[9] 1992թ. Կոսովոյի ալբանացիները գրող Իբրահիմ Ռուգո-վոյին ընտրեցին նախագահ, որի կառավարությունը գործում էր արտասահմանում:

1997թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կոսովոյի 1995թ., երբ ՆԱՏՕ-ի շնորհիվ Բոսնիայի սերբերը պարտություն կրեցին Կոսովոյի Ազատագրության Բանակը-ԿԱԲ-անցավ բացահայտ ալբանացիները բոյկոտեցին Սերբիայի պառլա-մենտի ընտրությունները, տեղի ունեցան ծանր բախումներ ոստիկանության և ԿԱԲ-ի միջև:[10]

Դեռևս 1980-ականների վերջերին գերմանական հատու ծառայությունները սկսեցին ակտիվ գործել Ալբանիայում և աջակցեցին Սալի Բերիշուին հաղթել 1992թ. ընտրություններում: Միաժամանակ Գերմանիան կապեր հաստատեց ԿԱԲ-ի հետ զինելով և ֆինանսավորելով նրանց: Ամերիկյան հատուկ ծառայություններ նույնպես ֆիանսավորում և վարժեցնում էին ԿԱԲ-ի մարտիկներին: 1997թ. սկզբին Ալբանիա-յում սկսված ֆինանսական ճգնաժամը խռովություններ առաջ բերեց երկրի հարավում, որի արդյունքում թալանվեցին բանակի զինանոցները և 610 հազար միավոր զենք հայտնվեց ալբանացիների ձեռքում, որի մի մասը հետո հայտնվեց Կոսովոյում և Մետոխիայում: Ալբանական հատուկ ծառայությունների նախկին ղեկավար Բաշկիմ Գեզիդեդեի պնդմամբ այս ամենի կազմակերպիչը ԿՀՎ տնօրեն Ջորջ Թենեթն էր: Կոսովոյի պատերազմի ելքը որոշվեց 1999թ. մարտի 24-ից հունիսի 10-ը, երբ ՆԱՏՕ-ն էթնիկ զտումները կանխելու քողի տակ ռազմական գործողություններ սկսեց Հարավ-սլավիայի դեմ, որի արդյունքում Կոսովոն հայտնվեց ալբանացիների ձեռքում:[11] ՆԱՏՕ-ի ղեկավարությունը պահանջեց սերբերից դուրս բերել զորքերը Կոսովոյից և Մետոխիայից և այդտեղ տեղաբաշխել ՆԱՏՕ- ի ուժերը: Հարավսլավիան կատարեց վերջնագրի պահանջները: Ռամբուեյում ընթացող բանակցությունները նույնպես անարդյունք եղան, որից հետո ՆԱՏՕ-ն անցավ ռմբահարումների չունենալով ՄԱԿ-ի

[9] Вадим Трухачев. «Независимость» Косово: первый шаг к великой Албании. Часть I
[10] Вадим Трухачев. «Независимость» Косово: первый шаг к великой Албании. Часть 1
[11] О. В. Валецкий. Истоки и течение сербско-албанской борьбы за Косово и Метохию.Часть 1

թույլատվությունը:[12] Մարտ-հունիս ամիսների ընթացքում ՆԱՏՕ-ն իրականացրեց ռազմական գործողություններ Հարվսլավիայի տարածքում՝ օգտագործելով ավելի քան 500 ինքնաթիռ, տասնութ Տամահավկ հրթիռներ, Գոնսալես հածանավը, կասետային ռումբեր, մոտ երեք հարյուր թևավոր հրթիռներ, և ռմբակոծվեցին Բելգրադը և այլ խոշոր քաղաքներ, զոհվեցին խաղաղ բնակիչներ, ուղևորներ տեղափոխող գնացքը ոչնչացվեց: 1999 հունիսի 12-ի գիշերը ռուս դեսանտայինները փոխգնդապետ Յունուս-բեկ Եվկուրովի գլխավորությամբ կանխելով ՆԱՏՕ-ի զորքերին մտան Հարավսլավիա: Նրանք արագ Բոսնիա-Հերցոգովինայից շարժվելով գրավեցին Պրիշտինայի մոտական սլատինի օդանավակայանը, որից քսան րոպե անց այնտեղ հայտնվեցին ՆԱՏՕ-ի զորամիավորումները: ՆԱՏՕ-ի հրամանատար Ուեսլի Կլարկը հրամայեց անգլիացի գեներալ Մայքլ Ջեկսոնին հետ վերցնել ռուսներից օդանավակայանը, բայց վերջինս հրաժարվեց դա անել: Հունիսի 20-ին հարավսլավական բանակը թողեց Կոսովոն և Մետոխիան: 2008 փետրվարի 17-ին Կոսովոն հռչակեց իր անկախությունը: Նրա տարածքում կառուցվեց ամերիկյան ռազմաբազա Քեմփ-Բոնդստիլը, որտեղ կա 19 հազար մարդ: Կոսովոյի ճգնաժամի ընթացքում, 1999 ապրիլի 12-ին, երբ Հարավսլավիան հարձակման էր ենթարկվում ՆԱՏՕ-ի կողմից, Հարավսլավիայի պառլամենտը կողմ քվեարկեց Ռուսաստան-Բելոռուս միությանը միանալու օգտին: Ռուսական պառլամենտը արտակարգ նստաշրջանում լիովին աջակցեց Հարավսլավիայի որոշմանը, բայց նախագահ Ելցինը արգելափակեց այս գործընթացը: Նույնիսկ արդյունք չտվեց Ռուսաստանի Պետական դումայի հանձնարարականը տեխնիկա և ռազմական խորհրդականներ ուղարկել Հարավսլավիա: Դա չարվեց, քանի որ ՄԱԿ-ը էմբարգո էր դրել Հարավսավիային զենք մատակարարելու վրա:[13]

2.5.Հարավսլավիայի փլուզումն ու նրա հետևանքները

XX դարի վերջին փլուզվեցին երեք պետություններ ԽՍՀՄ-ը, Հարավսլավիան և Չեխոսլովակիան: Այս երկրների ազգերը չկարողացան մինչև վերջ օգտվել ֆաշիզմի

---

[12] Кондолиза Райс: «The unusual combination of factors found in the Kosovo situation — including the context of Yugoslavia`s breakup, the history of ethnic cleansing and crimes against civilians in Kosovo, and the extended period of U.N. administration — are not found elsewhere and therefore make Kosovo a special case. Kosovo cannot be seen as a precedent for any other situation in the world today» // Цит. по ст. В Turkish Daily News

[13] О. В. Валецкий. Истоки и течение сербско-албанской борьбы за Косово и Метохию. Часть 2

դեմ տարած հաղթանակի արդյունքից: Նրանք մտան «սոցիալիստական միության» մեջ, խորապես ինտեգրեցին իրենց տնտեսությունը, զբաղեցրեցին արժանի դեր միջազգային գործերում:

Հարավային սլավոնական ժողովուրդների անկախ պետությունը Եվրոպայում հիմնադրվեց 1918 թվականին: 1929 թվականից այն սկսեց անվանվել Հարավսլավիա, 1945 թվականին, երբ երկիրը ազատվեց ֆաշիստական օկուպացիայից, վերանվանվեց Հարավսլավիայի ֆեդերատիվ ազգային պետության, իսկ 1963 թվականին ստացավ Հարավսլավիայի Ֆեդերատիվ ժողովրդական Հանրապետություն անվանումը: Նրա մեջ էին մտնում Սերբիայի, Խորվաթիայի, Սլովենիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Մակեդոնիայի և Չերնոգորիայի պետությունները:

Բացի դրանից, Սերբիայի մեջ մտան երկու ինքնավար մարզեր Վոեվոդինան (զգալի բնակչությունը հունգարացիներ են) և Կոսովոն, Մետոխիան (ալբանական բնակչության գերակշռմամբ):

Չնայած Հարավային սլավոնական ժողովուրդների նմանության, նրանց միջև պահպանվեցին նաև կրոնական և էթնո-լեզվական զգալի տարբերություններ:

Այսպիսով, սերբերը, չեռնոգորցիները և մակեդոնացիները դավանում էին ուղղափառ կրոնին, խորվաթները և սլովենները կաթոլիկության, իսկ ալբանացիները և սլավոնները մահմեդականության:

Սերբերը, խորվաթները, չեռնոգորցիները և սլավոն-մուսուլմանները խոսում են սերբ-խորվաթերեն, սլովենները սլովեներեն, իսկ մակեդոնացիները մակեդոներեն:

Հարավսլավիայում ընդունված է երկու գիր Կիրիլիցայի հիման վրա(Սերբիա, Չեռնոգորիա և Մակեդոնիա) և լատիներենը (Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա և Հերցեգովինա):

Կարևոր է ընդգծել, որ այդ էթնո-լեզվական հատկանիշներին ավելացան նաև սոցիալ-տնտեսական բնույթի առանձնահատկություններ, հիմնականում Խորվաթիայի և Սլովենիայի և այլ քիչ զարգացած երկրների միջև, որոնք խորացնում էին նաև այլ սոցիալական հակասություններ:

Օրինակ, ուղղափառները և կաթոլիկները կարծում էին, որ երկրում գործազրկության հիմնական պատճառներից մեկը համարվում է մահմեդական շրջաններում բնակչության բարձր աճը:

Հարավսլավիայի իշխանության ժամանակ հաջողվեց թույլ չտալ ազգայնական և անջատողական անկարգություններ: Սակայն 1991-1992 թվականներին էթնիկական անհանդուրժողականությունը խորացավ նրանով, որ պետությունների միջև շատ սահմաններ անցկացվել էին առանց հաշվի առնելու բնակչության ազգային-էթնիկական կազմը, և բազմաթիվ քաղաքական կուսակցություններ սկսեցին հանդես գալ բացահայտ ազգայնական կարգախոսներով:

Արդյունքում, հենց այդ տարիներին էլ տեղի ունեցավ Հարավսլավիայի անկումը, 1991 թվականին նրանից առանձնացան Սլովենիան, Խորվաթիան, Բոսնիան և Հերցեգովինան, Մակեդոնիան, իսկ 1992 թվականին կազմավորվեց նոր հարավսլավական ֆեդերացիան, որի մեջ մտան Սերբիան և Չեռնոգորիան:

Հարավսլավիայի այդ արագ անկումը ընթանում էր տարբեր ձևերում, ինչպես համեմատաբար խաղաղ (Սլովենիա, Մակեդոնիա), այնպես էլ ծայրահեղական (Խորվաթիա, Բոսնիա և Հերցեգովինա) պայմաններում:

Համեմատաբար խաղաղ բնույթ ուներ Սլովենիայի անջատումը: Ապագայում ևս այստեղ լուրջ քաղաքական և ռազմաքաղաքական բարդություններ չառաջացան:

Հարավսլավիայից Մակեդոնիայի անջատումը ուղեկցվեց ոչ թե ռազմական, այլ դիվանագիտական հակասությամբ: Այդ պետության անկախության հռչակումից հետո, իրեն հարևան երկիրը Հունաստանը, հրաժարվեց ճանաչել նրան: Հարցն այստեղ նրանումն է, որ մինչև 1912 թվականը Մակեդոնիան մտնում էր Օսմանյան կայսրության մեջ, իսկ Թուրքիայի իշխանազրկությունից հետո երկրի տարածքը բաժանվել էր Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի և Ալբանիայի միջև:

Հետևաբար, անկախ Մակեդոնիան, որն առանձնացել էր Հարավսլավիայից, գրավեց այդ պատմական շրջանի միայն 1/4 մասը, և Հունաստանը մտահոգվեց, որ նոր պետությունը կարող է գրավել նաև հունական հատվածը: Այդ իսկ պատճառով, վերջին հաշվով, Մակեդոնիան մտավ ՄԱԿ-ի մեջ որպես «Հարավսլավիայի նախկին հանրապետություն Մակեդոնիա»: Ավելի մեծ ռազմա-քաղաքական բարդություններով ուղեկցվեց Խորվաթիայի բաժանումը Հարավսլավիայից: 1990- ական թվականների սկզբներին բնակչության մեջ սերբերը գերակշռում էին 12%-ը, ընդ որում, նրա որոշ շրջաններ վաղուց ի վեր համարվում էին սերբական: Դա հիմնականում վերաբերում էր այսպես կոչված Ռազմական սահմանային շրջանին, որը ստեղծվել էր դեռ-

ևս XVI-XVIIV դարերում Ավստրիայի կողմից և պահպանվել էր XIX դարում Օսման-յան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի ձևավորումից հետո:[14]

[14] 29 История Югославии, Т. II, М., 1963
Стругар В., Югославия в огне войны 1941-1945. М., 1985
Строительство основ социализма в странах Центральной и Юго-Восточной Европы. М.,

ՎԵՐՋԱԲԱՆ

Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը արտասահմանյան Եվրոպայի ամենաբազմազգ պետությունն էր: 255,8 հազար քառ. կմ տարածքի վրա բնակվող շուրջ 23 միլիոնանոց բնակչության ճնշող մեծամասնությունը 88,6 տոկոսը, կազմում են սլավոնական լեզվախմբի ժողովուրդները, այդ թվում սերբերը 36,3, խորվաթները 19,8, սլավոնները 7,8, մակեդոնացիները 6,0 չեռնոգորցիները 26 տոկոս: Երկրում բնակվում են նաև զգալի քանակությամբ հունգարացիներ, թուրքեր, գնչուներ, ինչպես նաև ընդամենը մեկ-երկու տասնյակ հազար կազմող ռումինացիներ, բուլղարներ, իտալացիներ, գերմանացիներ, ուկրաինացիներ: ՀՍՖՀ-ում, հատկապես Բոսնիայի և Հերցեգովինայի սոցիալիստական հանրապետությունում, քիչ չեն նաև 16-17-րդ դարերում մուսուլմանություն ընդունած սերբերի և խորվաթների հետևորդները, որոնք այսօր, սակայն, չունեն ազգային կողմնորոշում:

Առավել տարածված պետական լեզուն սերբ-խորվաթերենն է, որով խոսում են սերբերը, խորվաթները, չեռնոգորցիները, ինչպես նաև հարավսլավական մուսուլմանները: Սերբ-խորվաթներից քիչ տարբերվում են մակեդոներենն ու սլավոներենը:

Պատմական զարգացման յուրօրինակ ընթացքը հանգեցրել է նրան, որ բազմազգ ու բազմալեզու Հարավսլավիայում կողք կողքի գոյատևել են եվրոպական և արևելյան մշակույթը, ուղղափառությունը, կաթոլիկությունն ու մուսուլմանությունը: Երկրի տարբեր մասերում, արվեստի և գրականության, ճարտարապետության և բանահյուսության մեջ, լեզվում և սովորույթներում նկատելի է արևմտյան և արևելյան Եվրոպայի, Իտալիայի, Հունաստանի ու Թուրքիայի ազդեցությունը: Արևմուտքում և հյուսիս արևմուտքում, Խորվաթիայում և հատկապես Սլովենիայում ակնհայտ է արևմտաեվրոպական և մասնավորապես ավստրո-գերմանական կուլտուրայի ազդեցությունը, հարավ-արևելքում, Բոսնիայում, Հերցեգովինայում և Մակեդոնիայում մուսուլմանական արևելքի, իսկ Սերբիայում և Չեռնոգորիայում հին սլավոնական, ռուսական մշակույթի և սովորույթների ազդեցությունը:

Հարավսլավական ժողովուրդները միասնական պետության մեջ միավորվեցին միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1918 թվականի դեկտեմբերի 1-ին, սերբական թագավորության հիմքի վրա: Բուրժուական կալվածատիրական Հա-

բավսլավիան, որը կոչվում էր սերբերի, խորվաթների և սլավոնների թագավորություն, իր գոյությունը պահպանեց մինչև 1941 թվականը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը սկիզբ դրեց Հարավսլավիայի զարգացման նոր փուլին: 1945 թվականի ապրիլին Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի միջև կնքվեց բարեկամության, փոխօգնության և հետպատերազմյան համագործակցության պայմանագիր: 1945 թվականի նոյեմբերի 11-ին տեղի ունեցան հիմնադիր ժողովի ընտրությունները, որոնք ավարտվեցին առաջադեմ ուժերի հաղթանակով:

1946 թվականի հունվարի 31-ին ընդունված Հարավսլավիայի ժողովրդական ֆեդերատիվ Հանրապետության (Հարավսլավիան այդպես էր պաշտոնապես անվանվում մինչև 1963 թվականի սահմանադրության ընդունումը) առաջին Սահմանադրությունը հռչակեց երկիրը իրավահավասար ժողովուրդների միավորում-ֆեդերացիա, որի կազմի մեջ կամավոր մտան վեց ժողովրդական հանրապետություններ Սերբիան, Խորվաթիան, Սլովենիան, Բոսնիան, Հերցեգովինան, Մակեդոնիան և Չեռնոգորիան: Սերբիայի կազմում ստեղծվեցին Վոյեվոդինայի ինքնավար երկրամասը և Կոսովոյի ու Մետոխիայի ինքնավար մարզը:

Հարավսլավական ֆեդերացիայի ստեղծումը հանդիսացավ ազգային հարցի լուծման բնագավառում ժողովրդա-դեմոկրատական կարգի մեծագույն նվաճումը և խոշոր նշանակություն ունեցավ երկրի հետագա զարգացման ողջ ընթացքի վրա:

Ուսումնասիրելով նյութը և վերոնշյալից ելնելով կարող ենք եզրակացնել, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին Բալկաններն իրենից ներկայացնում էր այնպիսի տարածաշրջան, որը հետաքրքրություն էր ներկայացնում Մեծ Բրիտանիայի համար իր ռազմական և քաղաքական դիրքորոշման տեսանկյունից:

Այս տարածաշրջանը հետաքրքրություն էր ներկայացնում նաև բազմաթիվ այլ տերությունների համար, որոնք պայքարում էին Միջերկրական և Սև ծովում իրենց վերահսկողությունը հաստատելու համար, ինչպես նաև մյուս Եվրոպական մայրցամաքներում նույն հետաքրքրությունն էին հետապնդում: Իսկ եթե ավելի պարզ ասենք, ապա Բալկանները դա մի գիծ է, որում հատվում են բոլոր Եվրոպական գլխավոր պետությունների շահերը, և այդ իսկ պատճառով բալկանյան ազգերի ճակատագիրը խորհրդանշում է բոլոր եվրոպական ազգությունների ճակատագիրը: Անկասկած, Անգլիայի առաջնորդները պարզորեն հասկանում էին տվյալ տարածաշրջանի կա-

ընորությունը և պատերազմի ընթացքում ուշադրություն էին դարձնում տեղական պետությունների ու ժողովուրդների հետ փոխհարաբերություններին:

Քայքայումից առաջացած պետությունները զարգացման տարբեր ուղիներ են ընտրել, նրանց մի մասը ընտրել են զարգացման եվրոպական ուղին, իսկ մի մասը վարում են ինքնուրույն քաղաքականություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ. Վ. Ենգիբարյան, Հարավսլավիայի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետություն, Երևան 1986:
2. Լ. Ի. Զուբոկ, Ս. Վ. Զախարով, Նորագույն պատմություն, Երևան 1948:
3. Васильева Н., Гаврилов В., Историческая судьба Югославии в XX веке, 2000.480с.
4. Бережков В.М., Страницы дипломатической истории,-М. Международные отношения, 1992.-504с.
5. Гуськова Е., Югокризис начал разрастаться с момента его интернационализации, Международная жизнь.-2006.-N5.-С.73-84.
6. Данилевский Н. Я., Россия и Европаа. СПб, 1995.
7. Косово. Международные аспекты кризиса,М, 1999.
8. Тимофеев А. Ю., Истоки косовской драмы. М, 1999.
9. Фрейдзон В. И., Нация до национального государства. Историко-социологический очерк Центральной Европы X\Ш-начала XXв.,М., 1999.
10. Шеремет В.И., Война и бизнес, М, 1996.
11. Шеремет В. И., Кузьмин И.А., О цивилизационной роли балканской контактной зоны, Београд. 1998. С. 59-67.
12. Конфликты в условиях системных изменений в странах Восточной Европы, М.-1994.
13. Терзич С., Историческая подоплека событий в Косово и Метохии, Обозреватель, М.-1998-1410.
14. Гуськова Е. Ю., Кризис в Косове. История и современность.-Новая и новейшая история, М.-1999-М5.
15. Брагин Ю. А., Распад Югославии. Предпосылки трагедии.-Международная жизнь, М.-1995-М 4-5.
16. Предраг С., Гражданская война в Югославии. Причины и последствия, 1993-Ы7.
17. Преступления НАТО в Югославии. Документальные свидетельства, Белград- 1999.